ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4161-Ա « 13 » հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի Հ.1582-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Շինտրանսսերվիս» ՓԲԸ-ի տնօրեն Սերգեյ Սիմոնյանի 08.10.2025թ. հ.Դ-111214-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2021 թվականի մայիսի 19-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.1582-Ա որոշման հավելվածի 6-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
13.10.2025թ.
հ. 4161-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Շավարշ Սարգսյան /լիազորված անձ/ Աննա և Կարինե Դավթյաններ	Նոր Խարբերդի այգետարածք, հ.29	հողամաս	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 21.07.2023թ. հ.15271 և հ.15272 լրացուցիչ վկայագրերով, Աննա և Կարինե Դավթյաններին անցած ժառանգական գույքին՝ Նոր Խարբերդի այգետարածքի հ.29 հասցեում գտնվող 500.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 20-րդ փողոց, հ.2/11	01113QAQ8DVK	
2	Հասմիկ Մարտիրոսյան /լիազորված անձ/ Աննա Բաղրամյան	Էրեբունի 2-րդ զանգված, 74-րդ թաղամաս, հ.17	հողամաս	Էրեբունի 2-րդ զանգվածի 74-րդ թաղամասի 504.0քմ մակերեսով հ.17 հողամասին /հիմք՝ ՀՀ Վարչական դատարանի 12.06.2023թ. հ.ՎԴ/6462/05/22 վճիռ/ տրամադրել հասցե՝ Էրեբունի այգեգործական տարածք, 2-րդ զանգված, հ.74/17	01053A8FTDWR	
3	Կարապետ, Սարգիս, Արամ, Ռաֆֆի Համբարձումյաններ և Մարիամ Մարտիրոսյան	Տիգրան Մեծի նրբանցք, հ.8 շենք, հ.216,217	բնակարան	Կարապետ, Սարգիս, Արամ, Ռաֆֆի Համբարձումյաններին և Մարիամ Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփակա-նության իրավունքով պատկանող, Տիգրան Մեծի նրբանցքի հ.8 շենքի հ.216,217 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.06092022-01-0049/ բաժանման հատակագծով առանձնացվող 23.83քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա, նրբանցք, հ.8 շենք, բն.13	010536SHA7JH	
4	Կարապետ, Սարգիս, Արամ, Ռաֆֆի Համբարձումյաններ և Մարիամ Մարտիրոսյան	Տիգրան Մեծի նրբանցք, հ.8 շենք, հ.216,217	բնակարան	Կարապետ, Սարգիս, Արամ, Ռաֆֆի Համբարձումյաններին և Մարիամ Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփակա-նության իրավունքով պատկանող, Տիգրան Մեծի նրբանցքի հ.8 շենքի հ.216,217 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.06092022-01-0049/ բաժանման հատակագծով առանձնացվող 33.26քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա, նրբանցք, հ.8 շենք, բն.13/1	010538UW8AZP	
5	Շուշիկ, Սոֆիկ, Դոնարա և Մանուշ Մուրադյաններ	Սպորտինտերների փողոց, հ.93	բնակելի տուն	Շուշիկ, Սոֆիկ, Դոնարա և Մանուշ Մուրադյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Սպորտինտերների փողոցի հ.93 հասցեում գտնվող բնակելի տանը /վկ. հ.024944/ տրամադրել հասցե՝ Ս. Վրացյան փողոց, հ.93/1	01063XWCAYQ9	

6	Վահագն Նահապետյան /լիազորված անձ/ Վարուժան Հակոբյան	Կուրղինյան փողոց, հ.11 շենք, հ.33	բնակարան	Վարուժան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Կուրղինյան փողոցի հ.11 շենքի հ.33 հասցեում գտնվող բնակարանի բաժանման հատակագծով առանձնացվող 31.86քմ մակերեսով մասին /վկ. հ.01102025-01-0305, ընդ. բաժ. 1.25քմ/ տրամադրել հասցե՝ Կուրղինյան փողոց, հ.11 շենք, բն.33/1	01073PVP2Y9L	
7	Պարոյր Հակոբյան /լիազորված անձ/ «ՄԱՍՏԵՐ ՇԻՆ» ՍՊԸ	Ծարավ Աղբյուրի փողոց, հ.134/2, հ.134/5 և հ.134/7	հողամաս	«ՄԱՍՏԵՐ ՇԻՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Ծարավ Աղբյուրի փողոցի հ.134/2, հ.134/5 և հ.134/7 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.27012022-01-0286, հ.26012022-01-0237 և հ.30122021-01-0503/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ծարավ Աղբյուրի փողոց, հ.134/2	01023BW2ACHN	
8	«ՇԻՆՏՐԱՆՍՍԵՐՎԻՍ» ՓԲԸ	Շիրակի փողոց, հ.86 և հ.80/1	հողամաս	«ՇԻՆՏՐԱՆՍՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի փողոցի հ.86 և հ.80/1 հասցեներում գտնվող շինությունների զբաղեցրած հողամասերին /վկ. հ.14052021-01-0218 և հ.14052021-01-0219/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Շիրակի փողոց, հ.80/1	01113AJXGGVC	
9	Անի Բաբուրյան /լիազորված անձ/ Լեոնիկ Բաբուռյան	Ա. Ավետիսյան փողոց, հ.11բ	բնակելի տուն	Լեոնիկ Բաբուռյանին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Ավետիսյան փողոցի հ.11բ հասցեում գտնվող բնակելի տանը /վկ. հ.26032012-01-0301/ տրամադրել հասցե՝ Ա. Ավետիսյան փողոց, հ.11/3	01033D5GZZTS	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**